

Սարգսյան Լիաննա
ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՍԱԳՈՐԾՎԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵՍԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

20-րդ դարի վերջին տասնամյակներից սկսած՝ նկատվում է միջազգային հանցավորության բավականին ակտիվացում, որի վտանգավորությունն ավելի է խորանում նախկինում փակ կամ խստորեն վերահսկվող պետությունների սահմանների բափանցելիության, տնտեսական շուկաների ընդլայնման հետևանքով։ Այս ամենը հիմք է դառնում հանցավորության նոր, անհայտ ձևերի ի հայտ գալուն և դրանց տարածական ընդլայնմանը։ Առևտի, ֆինանսների և տեղեկատվության բնագավառներում տեղի ունեցող փոփոխությունների արդյունքում հանցավորությունն այլևս չի ներփակվում ազգային սահմաններում։

Մասնագետներից շատերը փաստում են, որ հանցավորությունն արդեն դուրս է եկել մեկ պետության սահմաններից¹ և դարձել անդրազգային, իսկ շատ դեպքերում սկսել է համընդհանուր (գլոբալ) բնույթ ստանալը։ Ընդ որում, փոփոխվել է հենց անդրազգային հնացավորություն հասկացությունը։ Նախկինում այն սահմանվում էր որպես միջազգային հանցագործությունների ամբողջություն, որը միջազգային հանրության համար մեծ վտանգավորություն էր ներկայացնում և միջազգային բնույթի հանցագործություններ, որոնք ավելի նվազ վտանգավորություն էին ներկայացնում, բայց վնաս էին պատճառում միջազգական հարաբերություններին, խարարում էին պետությունների խաղաղ գոյակցությունը, վնաս էին հասցնում կազմակերպություններին և քաղաքացիներին։

Այսօր անդրազգային հանցավորությունը ոչ միայն ընդգրկում է վերը նշված ոլորտները, այլ նաև բնութագրվում է որպես «մի քանի պետությունների տարածքներում անօրինական միջոցներով և արգելված

¹ Ст. Уголовная юстиция: Проблемы международного сотрудничества.-М.: БЕК, 1995. 296 с.

² Ст. Горянинов К. К., Исиченко А. П., Кондратюк Л. В., Транснациональная преступность: Проблемы и пути их решения.- М., 1997, էջ 245:

ապրանքների ու ծառայությունների ներգրավմամբ իրականացվող քրեածին կորպորացիաների առևտրային գործունեություն»¹: Այս հանգամանքից ելնելով՝ անդրազգային բնույթի հանցագործություններ պետք է համարել նրանք, որոնք լայն տարածում են գոտել միջազգային ասպարեզում, ոտնձգում են ներպետական իրավակարգի դեմ: Այդպիսին համարելու գլխավոր չափանիշը պետությունների սահմաններից դուրս գալի է: ՄԱԿ-ը բնուրագրել է դրանք որպես «իրավախախտումներ, որոնք նախապատրաստվում, իրականացվում են և դրանց ուղղակի կամ անուղղակի հետևանքները ընդգրկում են մեկից ավելի պետություններ»²: Այդ հանցագործությունների համար պատասխանատվությունը սահմանվում է ներպետական օրենսդրությամբ: Նման հանցագործություններին հակագրելու խնդիրը արդիական է ոչ միայն մեր պետության, այլև ողջ աշխարհի համար, քանզի այսօր հանցավոր խմբավորումների քրեածին գործունեությունը հասնում է մեծ չափերի, որոնց մասշտաբներն ու կազմակերպվածության աստիճանը ձեռք են բերում արդեն վերազգային բնույթ: Ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, երբ հանցավորության դեմ պայքարում անհրաժեշտ է համագործակցել և միավորել միջազգային հանրության իրավապահ մարմինների ուժերը՝ ընդգրկելով դրանք միջազգային համագործակցության առավել լայն գործունեության մեջ: Միջազգային համագործակցության ընդլայնումն այս բնագավառում պայմանավորված է ոչ միայն հանցավորության կտրուկ աճով, այլև կարևոր փաստերի բացահայտմամբ, նախականիսմամբ, որոնք կնպաստեն ինչպես նման համագործակցության հեռանկարների ընդլայնմանը, այնպես էլ իրավական կարգավորման կատարելագործմանը:

Համագործակցության անհրաժեշտությունը հատկապես պետք էր ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված նորանկախ պետություններին, քանզի անցումը խիստ կենտրոնացված կառավարման մոդելից ազատ շուկայական հարաբերություններին էականորեն փոփոխեց այդ երկրների, այդ բժիշկ նաև Հայաստանի, քաղաքական, տնտեսական, սոցիալական և իրավական համակարգերը: Արտաքին տնտեսական կապերի, ներքին արժույթի շուկայի զարգացումը և միջազգային իրավունքի նորմերի գե-

¹Տե՛ս Իվանով Է. Ա., Понятие транснациональной преступности и международно-правовое регулирование борьбы с ней//Преступность и законодательство.- М., 1997. с. 367-368.

²Տե՛ս Результаты Четвертого обзора ООН по вопросу о тенденциях систем уголовного правосудия.-A/CN.6. 169/153A(1c). 1, 20 նոյ. 1994

րակայության ընդունումը նպաստեցին մի կողմից Հայաստանի Հանրապետության ավելի լիարժեք ինտեգրմանը համաշխարհային տնտեսությանը, ֆինանսական և իրավական դաշտին, մյուս կողմից առաջ բերեցին մի շարք բացասական երևույթներ: Այսպես, օրինակ, դրանցից ամենավտանգավորը հասարակության և պետության տնտեսական կյանքի քրեականացումն էր: Միաժամանակ հարկ է նշել, որ այդ երկրներում ի հայու եկան մի շարք լիիմնողեն հզոր երևույթներ, որոնք նպաստեցին հանցագործությունների կտրուկ աճին, հատկապես, բարոյահոգեքրանական այն բացասական տեղաշարժերը, որոնք տեղի ունեցան ԽՍՀՄ փլուզումից հետո՝ հոգևոր արժեքների, կյանքի մակարդակի շեշտակի անկումը, գործազրկության աճը, գույքային անհավասարությունը, միջին խավի բացակայությունը. երևույթներ, որոնք ուղղակիորեն նպաստում են բնակչությանը հակաիրավական դաշտ ներքաշվելուն: Ահա այս հանգանակները նկատի ունենալով էլ հանցագործության կանխարգելման և դրա դեմ պայքարում պետությունները ծառում են համագործակցել միմյանց հետ: Միազգային հանրությանը անհանգստացնող հանցավոր արարքները չափուր է անպատասխան մնան: Դրանց կանխարգելումն ու հետապնդումը պետք է իրականացվեն ինչպես ներպետական միջոցներով, այնպես էլ միջազգային համագործակցության ակտիվացմանը: Միջազգային հանցագործության դեմ պայքարը կարող է իրականացվել միայն շահագրգիռ պետությունների համապատասխան հաստատությունների և համակարգերի բոլոր տարրերի փոխհարաբերակցության շնորհիվ, իհարկե, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման արդյունքում:

Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն համագործակցում է ինչպես օտարերկրյա պետությունների, այնպես էլ միջազգային համապատասխան կազմակերպությունների հետ: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից մեկն է որոշակի խնդիրների լուծման գործընթացների ժամանակ համագործակցության եզրեր գտնել այլ պետությունների և միջապետական միավորումների հետ, որանց հիմնան վրա երկվող և բազմակողմ գործընկերային հարաբերություններ ձևավորել, որը կնպաստի միջազգային հարաբերություններում պետության կայունության ամրապնդմանը: Նոր մարտահրավերներ և սպառնալիքներ (առաջին հրթին միջազգային ահարեկչությունը, թմրանյութերի ապօրինի շրջանառությունը, կազմակերպված հանցագործությունը) համընդհանուր բնույթ են կրում և միջազ-

գային հանրության կողմից համարժեք պատասխան, և դրանք հաղթահարելու համար համատեղ ջանքեր են պահանջում: Ահա թե ինչո՞ւ հասարակական կյանքի զարգացման ներկա փոլում ցանկացած պետության իրավապահ մարմինների գործունեության համակարգման համար առաջնային խնդիր է դարձել հանցավորության դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցների բացահայտումը:

Հարկ է նշել, որ գործունեության այս ոլորտում գլխավոր դերը պատկանում է հատկապես քրեական գործերով իրավական օգնությանը: Դեռևս խորհրդային տարիներին, ՀԽՍՀ-ն, լինելով ԽՍՀՄ-ի անդամ, գործուն մասնակցություն էր ունենում հանցավորության դեմ պայքարում: Սակայն Խորհրդային Սիոնթյան փոլումը հանգեցրեց միասնական իրավական դաշտի փոլուման: Նախկինում «քափանցիկ» սահմանադրը իրավական մարմինների աշխատակիցների համար դարձան անհաղթահարելի: Սինչետ հանցագործությունը ոչ միայն պահպանեց իր միասնական բնույթը, այլև դարձավ կազմակերպված, հասարակության համար շատ ավելի վտանգավոր, քանի որ կարող է բացասական ազդեցություն ունենալ հասարակության ժողովրդավարացման, ուժորմիստական փոփոխությունների վրա, խաթարել տնտեսությունը, նպաստել քրեական տարրերի գործունեության ակտիվացմանը: Բնականարար, նման իրավիճակում քրեական գործերը քննող իրավապահ մարմինները առաջին անգամ բախվեցին այնպիսի խնդիրների հետ, ինչպիսք էին քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալը, հանցագործություն կատարած անձանց հանձնումը և այլն:

1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունը ձեռք բերեց անկախություն և ձեռնամոլիս եղավ նոր պայմանագրային-իրավական բազայի ձևակորմանը: Զհանդիսանալով ԽՍՀՄ իրավահաջորդը միջազգային պայմանագրերի նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է ինքնուրույն ձևավորեր պետության գործունեության գրեթե բոլոր ոլորտները ընդգրկող իր պայմանագրային դաշտը: Այն իրականացվում էր երկկողմ և բազմակող պայմանագրեր կնքելով, միանալով արդեն իսկ գործող բազմակողմանի և տարածաշրջանային պայմանագրերին, անդամագրվելով միջազգային կառույցներին և այլն: Բնականարար, այս գործընթացից չէր կարող դուրս մնալ քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտը:

Միջազգային իրավունքի իիմնական սկզբունքներից մեկի՝ պետությունների համագործակցության սկզբունքի բովանդակային տարրերից

մեկն է համարվում նաև պետությունների համագործակցությունը քրեական գործերով իրավական օգնության շրջանակներում: Պետությունների համագործակցության սկզբունքը՝ որպես հիմնարար դրույթ, ոչ միայն ամրագրված է ՍԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածում, այլև այն, ըստ Էության, արտացոլվում է կանոնադրային բոլոր դրույթների մեջ: Նրա նորմատիվային բովանդակությունը ամրագրված է նաև ՍԱԿ-ի 1970 թ. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հոչակագրում, որը վերաբերում է պետությունների միջև բարեկամական հարաբերությունների հաստատմանն ու համագործակցությանը, ինչպես նաև 1975 թ. ԵԱՀԽ-ի Եզրափակիչ ակտում: Պետք է նաև փաստել, որ բոլոր պետությունների համար ձևավորվել է միջազգային-իրավական պարտավորություն՝ միջազգային հարաբերությունների միմյանց հետ համագործակցել տարբեր ոլորտներում: Ուստի պետությունների հետ ՀՀ իրավական համագործակցության ընդլայնումը, կապերի խորացումը միջազգային հանրության հետ պահանջում են առավել արդյունավետ համագործակցություն իրականացնել հատկապես իրավական օգնության ոլորտում: Ինչպես իրավացիորեն նշում է Ն.Ի.Մատիշևան. «Միջազգային-իրավական օգնությունը այդ գործընթացի կարևոր տարրն է, որը կարող է նպաստել իրավական համակարգերի մերձեցմանը և կարևոր քայլ հանդիսանալ միասնական իրավական տարածքի ստեղծման գործում»:¹

Քրեական գործերով իրավական օգնության մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, թե ինչպես է բնութագրվում այդ ինստիտուտը և իրավաբանական գրականության մեջ այդ ինստիտուտի վերաբերյալ ինչպիսի կարծիքներ կան: «Իրավական օգնություն» հասկացության վերաբերյալ կան մի շարք տեսակետներ և ձևակերպումներ: Օրինակ՝ եթե հունգարացի իրավաբան Ֆ. Մարկուշը այս ինստիտուտը բնութագրում է որպես «օգնություն», որը կոնկրետ քրեական գործի քննության ընթացքում ցուցաբերվում է մի պետության մարմինների կողմից այլ պետության մարմիններին և կարող է իրականացվել գործի քննության համար անհրաժեշտ կոնկրետ դատավարական գործողություններ կատարելու կամ փաստաթորթեր փոխանցելու ձևով², ապա ֆրանսիացի գիտնական Կ.

¹Տե՛ս Լ ածնօթաââ Ի. Է. “Լ առաջնահայտության մասին օրենքը” 1996, էջ 2:

²Տե՛ս Օօ՛ էջ Ա. Լ. Ի., Լ առաջնահայտության մասին օրենքը 1974, Ն 3, էջ 86:

Լոմբուան դատական փոխօգնությունը ձևակերպում է որպես «որոշակի միջոցառումների համակցություն, որոնց միջոցով մի պետությունը մեկ այլ պետության է՝ տրամադրում իր հասարակական ծառայությունների կամ դատական ինստիտուտների օգնությունը՝ հանցագործության քննության, դատական քննության կամ հանցագործին պատժելու նպատակով»¹: Քրեական գործերով իրավական օգնությունը ուսւ գիտնական Վ. Շուպիլովը բնութագրում է որպես «պայմանավորվող պետություններից մեկի իրավասու մարմինների կողմից իրականացվող գործողություններ, որոնք անհրաժեշտ են քրեական գործի քննության, դատական քննության կամ էլ քրեական գործով նշանակված պատիճն ի կատար ածելու համար»², իսկ օրինակ 1959 թ. Ստրասրուրգում կնքված Քրեական գործերով իրավական օգնության մասին Եվլուպական կոնվենցիայի 1 հոդվածի 1-ին կետում ամրագրված է, որ «Պայմանավորվող կողմերը պարտավորվում են սույն կոնվենցիայի դրույթներին համապատասխան միմյանց ամենալայն իրավական օգնություն տրամադրել այն հանցագործությունների դեմ քրեական հետապնդում իրականացնելիս, որոնք իրավական օգնության խնդրանքը տալու ժամանակ մտնում են հայցող կողմից դատական մարմինների իրավագործության սահմանների մեջ»³:

Անհայտ է, որ վերը նշված հասկացություններից յուրաքանչյուրն արտահայտում է իրավական օգնության ինստիտուտի այս կամ այն առավել բնորոշ հատկանիշները: Առանձնացնելով ամենակարևորները և տրամարանորեն միավորելով դրանք՝ կարելի է եզրակացնել, որ քրեական գործերով իրավական օգնությունն իրենից ներկայացնում է մի պետության կողմից (պայմանագրի մասնակից մյուս պետության համապատասխան խնդրանքի հիման վրա) քրեաղատավարական քննույթի որոշակի գործողությունների կատարում (վկաների հարցաքննություն, փորձաքննության անցկացում, դատական փաստաթղթերի հանձնում և այլն), որոնք անհրաժեշտ են հայցող երկրում արդարադատություն իրականացնելու համար: Այս կարող է ընդգրկել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հանցագործություն կատարած անձանց հանձնումը, խուզարկությունը, մատնահետքերի փոխանցումը, տեղեկատվության փոխանակումը և այլն: Քրեական գործերով իրավական օգնության հարցերի

¹ Տե՛ս ՕօԾ էօէ Ա. Ի ., նշվ. աշխ., էջ 86:

² Տե՛ս ՕօԾ էօէ Ա. Ի ., նույն տեղում, էջ 87:

³ Տե՛ս Նայ ձի էօ այ օն Ա Ն ահա Ա հ ձ ի յ ն ա ի ա հ ձ ա ն ն ո ւ ն ը է ա ի ա հ ա ն ո ւ ն ը, Ն ի ն ն ծ լ ի յ ն ո ւ ն ը, 1998:

շրջանակը, որն առաջադրված է իրավապահ մարմինների կողմից, բավականին լայն է: Ահա թե ինչու այսօր էլ քրեական գործերով իրավական օգնության խնդիրները կարիք ունեն ինչպես նորմատիվային կոնկրետ կարգավորման, այնպես էլ այդպիսի օգնություն ցույց տալու համար մշակված ստույգ և արագ մեխանիզմների մշակման:

Քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտի կարգավորման իրավական հիմքը միջազգային-իրավական նորմերն են: Կարծում ենք, որ դրանք կարելի է համակարգել՝ ելնելով ցուցաբերվող օգնության ծավալներից և միջավետական փոխհարաբերությունների պրակտիկայից: Կարող են կանգնել միջազգային պայմանագրեր, որոնք կընդորկեն նորմեր կարգավորող հարաբերությունների ողջ համալիրը: Դրանք ավանդաբար վերաբերում են հենց քրեական գործերով իրավական օգնությանը կամ հարակից հարցերին: Բացի նշված դրույթներից՝ միջազգային-իրավական օգնության վերաբերյալ պայմանագրերը բովանդակում են նորմեր, որոնք վերացնում կամ մեղմացնում են պայմանագրովող պետությունների օրենադրություններում առկա կոլիգիաները:

Քրեական գործերով իրավական օգնությունը կարգավորող ադրյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ իրավական օգնության վերաբերյալ ավանդական միջավետական պայմանագրերին զուգահեռ առանձնանում են նաև այլ միջազգային պայմանագրեր: Մասնավորապես միջկառավարական համաձայնագրերն ու միջզերատեսչական բնույթի պայմանագրերը, որոնք ոչ միայն նպաստում են միջավետական պայմանագրերի իրացմանը, այլև պարունակում են նորմեր, որոնք լրացնում են միջավետական պայմանագրերը: Ասկածը հիմնականում վերաբերում է միջզերատեսչական պայմանագրերին:

Որոշակի հետաքրություն են ներկայացնում հատկապես իրավական օգնության կարգավորմանը առնչվող առանձին միջազգային հանցագործությունների և միջազգային բնույթի հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ ունիվերսալ և տարածաշրջանային կոնվենցիաները: Այս կոնվենցիաներում ամրագրված նորմերը ոչ միայն կարգավորում են վերը նշված հանցագործությունները, դրանց դեմ պայքարի միջոցները, այլև բովանդակում են նորմեր, որոնք կարգավորում են այդ հանցագործությունների բնույթյան ժամանակ քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու կարգը: Նկատի ունենք այնպիսի ունիվերսալ, բազմակողմ միջազգային պայմանագրեր, ինչպիսիք են «Պատանիներ վերցնելու դեմ պայքարի» մասին կոնվենցիան, «Անդրազա-

անդրադառնալ հատկապես տարածաշրջանային պայմանագրերին, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպիսի ուղի է անցել մեր հանրապետությունը որպես իրավական պետություն կայանալու և միջազգային-իրավական գործընթացներին ինտեգրվելու ճանապարհին։ Այն սկսվեց ԱՊՀ պայմանագրերին անդամակցելով, որոնք նպատակ ունեին նախ և առաջ ԽՍՀՄ նախկին հանրապետությունների միջև այս բնագավառում ստեղծել հանցավորության դեմ պայքարի միասնական իրավական դաշտ։ Այսպես, 1993թ. դառնալով ԱՊՀ անդամ՝ Հայաստանի Հանրապետությունը 1993թ. ԱՊՀ շրջանակներում կնքում է քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին Սինսկի կոնվենցիան։ Այս կոնվենցիան կիրառության մեջ է մտնում և ԱՊՀ երկրները բավականին ակտիվ գործունեություն են ծավալում նրա շրջանակներում քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելիս, սակայն այն զերծ չէր բացքողումներից, քերություններից, որոնք խոչընդոտում էին այդ գործընթացներին (մասնավորապես խնդիրներ էին առաջանում միջնորդությունների ոչ հստակ ձևակերպումների, ներկայացվող պահանջների անհստակության հետ կապված և այլն), ուստի 2002թ. Քիշնեում կնքվում է մի նոր պայմանագիր, որը կոչված էր լրացնելու և ուղղելու այն բացքողումները, որոնք տեղ էին գտել 1993թ. պայմանագրում։ Այն՝ որպես իրավապատմական փաստաբուդ, այնուամենայնիվ, ունեցավ իր նշանակությունը, քանզի առաջին փորձն էր հետխորհրդային ժամանակաշրջանում քիչ թե շատ կանոնակարգելու այդ գործընթացները, փոխօգնության հնարավորություն ստեղծելու և որ ամենակարևորն է՝ վերահսկելու այդ ամենը։ Հայաստանի Հանրապետությունը նոյնպես կնքել է այս կոնվենցիան, որը մեր պետության համար ուժի մեջ է մտել 2005 թ. փետրվարի 19-ից։ Այս համագործակցությունը բավականին արդյունավետ է, որի մասին են վկայում միջազգային իրավական համագործակցության վերաբերյալ ՀՀ Գլխավոր դատախազության վերջին երկու տարիների տվյալները։ Այսպես, օրինակ, ԱՊՀ մասնակից պետություններից 2009 թ. ընթացքում ստացվել է 186 հարցում, որոնցից 61-ը քննչական հանձնարարությունների իրականացման համար, կատարվել են 43-ը, հանձննան վերաբերյալ արվել է 89 միջնորդություն, որոնցից 11-ը բավարարվել են, 22-ը՝ մերժվել, իսկ մնացածը դեռ քննության ընթացքում են։ ԱՊՀ երկրներ ՀՀ-ի կողմից ուղարկվել է 158 միջնորդություն, որոնցից 26-ը քննչական գործողություններ կատարելու առնչությամբ (կատարվել են

18-ը, ընթացքի մեջ են 8-ը), հանձնման վերաբերյալ եղել է 111 միջնորդություն (քննության են առնվել 111-ն էլ, ընդունվել են որոշումներ 58-ի վերաբերյալ, արդյունքում հանձնվել է 38 անձ, իսկ 6-ը՝ մերժվել): 2010 թ. ընթացքում ստացվել են 1727 հարցում, որոնցից 35-ը քննչական հանձնարությունների իրականացման համար, կատարվել են՝ 28-ը, հանձնման վերաբերյալ արվել է 25 միջնորդություն, որոնցից 4-ը բավարարվել են, 10-ը մերժվել, իսկ մնացածը դեռ քննության ընթացքում են, քրեական հետապնդում իրականացնելու համար ստացվել է 14 միջնորդություն, որոնից բավարարվել են 7-ը, ինչպես նաև ստացվել է 1653 այլ հարցումներ: ԱՊՀ երկրներ ՀՀ-ի կողմից ուղարկվել է 1893 միջնորդություն, որոնցից 22-ը քննչական գործողություններ կատարելու առնչությամբ (կատարվել են 9-ը, ընթացքի մեջ են 16-ը), հանձնման վերաբերյալ եղել է 71 միջնորդություն (բավարարվել են 21-ը, մերժվել են 7-ը, ընթացքի մեջ են 38-ը): Քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ ուղարկվել են 19 միջնորդություն և 1778 այլ հարցումներ¹:

Հաջորդ քայլը Եվրոպայի խորհրդին անդամակցելն էր, որի շրջանակներում Հյաստանի Հանրապետությունը միացավ արդեն իսկ գործող երկու կարևոր փաստարդերի՝ 1959 թ. Քրեական գործերով իրավական օգնության մասին Եվրոպական կոնվենցիային և 1957 թ. Հանցագործների հանձնման մասին Եվրոպական կոնվենցիային և նրա երկու լրացուցիչ արձանագրություններին² միանալն էր (ՀՀ-ն համար դրանք ուժի մեջ են մտել 2004 թ-ից): Այս փաստարդերին միանալով՝ Հյաստանի Հանրապետությունը ընդունեց իր համագործակցության դաշտը քրեական գործերով իրավական օգնության ոլորտում:

Միջազգային պայմանագրերի առումով մեծ նշանակություն ունեն նաև երկկողմանի պայմանագրերը: ՀՀ-ն այլ պետությունների հետ կնքել է այս հարաբերությունները կարգավորող երկկողմանի պայմանագրեր, մասնավորապես 1995թ ՀՀ և Բուլղարիայի Հանրապետության միջև քրեական գործերով իրավական օգնության մասին, Պայմանագիր Հյաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև հանձնման մասին, 10 ապրիլ, 1995 թ. ՀՀ և Ռումինիայի Հանրապետության միջև Քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնությ-

¹ Տվյալները վերցված են ՀՀ Գլախվոր դատախազությունից:

² Տե՛ս Նախագահի պատճենագիրը՝ ՀՀ Ազգային ժողովի առաջնախագահի պատճենագիրը՝ Հյաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև հանձնման մասին, 10 ապրիլ, 1995 թ. ՀՀ և Ռումինիայի Հանրապետության միջև Քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնությ-

յան մասին 199 նր. համաձայնագիր, ՀՀ և Վրաստանի Հանրապետության միջև քրեական գործերով իրավական օգնության մասին 1997 թ. պայմանագիր, Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև միջև քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին, Համաձայնագիր ՀՀ և ՍԱՀ միջև քրեական գործերով իրավական օգնության մասին, 20 ապրիլ, 2002 թ. Համաձայնագիր ՀՀ և ՍԱՀ միջև հանձնման մասին, 20 ապրիլ, 2002 թ., Համաձայնագիր ՀՀ և Իրանի Իսլամական Հանրապետության միջև քաղաքացիական և քրեական գործերով իրավական համագործակցության մասին, 2006 թ., Համաձայնագիր ՀՀ և Իրանի Իսլամական Հանրապետության միջև հանձնման մասին, 2006թ., Համաձայնագիր ՀՀ և Եզիզոսոփ Արարական Հանրապետության միջև հանձնման մասին, 15 ապրիլ, 2007 թ., Համաձայնագիր ՀՀ և Եզիզոսոփ Արարական Հանրապետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին, 15 ապրիլ, 2007թ.:

Այս պայմանագրերի հիման վրա նույնագույն ակտիվ համագործակցություն է ընթանում Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև, որը փաստելու համար բավական է միայն ներկայացնել այդ երկրներից ստացված և Հայաստանի հանրապետության կողմից ուղարկված միջնորդությունների քանակը: Այսպես՝ ՀՀ Գլխավոր դատախազությունը 2009 թ. ընթացքում ոչ ԱՊՀ անդամ երկրներից ստացել է 26 հարցում, որոնցից 18-ը՝ քննչական հանձնարարությունների իրականացման համար, որանցից կատարվել են 11-ը, հանձնման վերաբերյալ արվել է 6 միջնորդություն, որոնք բոլորն ել քննության են առնվել, արդյունքում 2-ը՝ մերժվել, իսկ մնացածը դեռ քննության ընթացքում են: Այլ երկրներ ՀՀ-ն կողմից ուղարկվել է 38 միջնորդություն, որոնցից 27-ը քննչական գործողություններ կատարելու առնչությամբ (կատարվել են 21-ը, ընթացքի մեջ են 6-ը), հանձնման վերաբերյալ եղել է 4 միջնորդություն (քննության են առնվել 4-ն էլ, ընդունվել են որոշումներ 3-ի վերաբերյալ, արդյունքում հանձնվել է 3 անձ: 2010 թ. ընթացքում ստացվել է 505 հարցում, որոնցից 41-ը քննչական հանձնարարությունների իրականացման համար և կատարվել են 22-ը, ընթացքի մեջ են 17-ը, մերժվել է 2-ը, հանձնման վերաբերյալ արվել է 2 միջնորդություն, որոնցից 2-ն էլ մերժվել է, քրեական հետապնդում իրականացնելու համար ստացվել է 3 միջնորդություն, բավարարվել է 1-ը, 1-ն էլ գտնվում է ընթացքի մեջ, ինչպես նաև ստացվել են 459 այլ հարցումներ: Այլ պետություններ ՀՀ-ի կողմից

ուղարկվել է 357 միջնորդություն, որոնցից 27-ը քննչական գործողություններ կատարելու առնչությամբ /կատարվել են 2-ը, ընթացքի մեջ են 25-ը/, հանձնման վերաբերյալ եղել է 11 միջնորդություն (բավարարվել է 1-ը, մերժվել է 1-ը, ընթացքի մեջ են 9-ը): Քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ ուղարկվել են 4 միջնորդություն և 315 այլ հարցումներ¹:

Առանձնակի ուշադրության են արժանի Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների կառավարությունների միջև կնքված համաձայնագրերը՝ ուղղված հանցավորության դեմ պայքարին. ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև իրավական տեղեկատվության փախանակության մասին 1994 թ. համաձայնագիրը, ՀՀ կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցության մասին 2000 թ. համաձայնագիրը, ՀՀ կառավարության և Կիպրոսի Հանրապետության կառավարության միջև կազմակերպված և հանցագործությունների այլ տեսակների դեմ պայքարում համագործակցության մասին 2006 թ. համաձայնագիրը, ՀՀ կառավարության և Եգիպտոսի Արարական Հանրապետության կառավարության միջև հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցության մասին 2007 թ. համաձայնագիրը, ՀՀ կառավարության և Լատվիայի Հանրապետության կառավարության միջև ահարենքության, կազմակերպված հանցավորության, թմրանութերի, հոգեներգործուն նյութերի և դրանց բաղադրիչների ապօրինի շրջանառության և այլ հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին համաձայնագիրը, ՀՀ կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև ոստիկանական համագործակցության մասին համաձայնագիրը և այլ համաձայնագրեր²:

Իրենց ուրույն նշանակությամբ և առավել սերտ համագործակություն ապահովելու առումով, մեր կարծիքով, առանձնանում են հատկապես միջզերատեսչական պայմանագրերը: Հայաստանի Հանրապետության մի շարք գերատեսչությունների, մասնավորապես ՀՀ Գլխավորդատախանակության և ՀՀ ոստիկանության (նախկինում ՆԳՆ) մասնակցությամբ կնքվել են հետևյալ միջզերատեսչական պայմանագրերը. ՀՀ Գլխավորդատախանակության և Սլովակիայի Հանրապետության Գլխա-

¹ Տվյալները վերցված են ՀՀ Գլխավորդատախանակությունից:

² Տվյալնը վերցված են ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք էջից:

Վոր դատախազության միջև իրավական օգնության և համագործակցության մասին 1999 թ. համաձայնագիրը, ՀՀ Գլխավոր դատախազության և ՇԺՀ Գերագույն ժողովրդական դատախազության միջև համագործակցության մասին 1999 թ. համաձայնագիրը, ՀՀ Գլխավոր դատախազության և ՈԴ Գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին 2006 թ. համաձայնագիրը, ՀՀ Գլխավոր դատախազության և Հունգարիայի Հանրապետության Գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին 2008 թ. հուշագիրը, ՀՀ ՆԳՆ և ՈԴ ՆԳՆ միջև համագործակցության մասին 1993 թ. համաձայնագիրը, ՀՀ ՆԳՆ և Սիրիայի Արաբական Հանրապետության ՆԳՆ միջև համագործակցության մասին 1995 թ. համաձայնագիրը, ՀՀ ՆԳՆ և Հունաստանի Հանրապետության հասարակական կարգի պահպանության նախարարության միջև համագործակցության մասին 1996 թ. համաձայնագիրը, ՀՀ ՆԳՆ և Լատվիայի Հանրապետության ՆԳՆ միջև համագործակցության մասին համաձայնագիրը, ՀՀ ՆԳՆ և Էստոնիայի Հանրապետության ՆԳՆ միջև համագործակցության մասին համաձայնագիրը, ՀՀ ՆԳՆ և ոստիկանության և ՈԴ ՆԳՆ միջև համագործակցության մասին 2003թ. համաձայնագիրը և այլ համաձայնագրեր¹:

Վերը նշված պայմանագրերը իրենց ուրույն դերն են ունեցել Հայաստանի Հանրապետության համար հանցափորության դեմ պայքարում միջազգային համագործակցության զարգացման, քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերու համար անհրաժեշտ կապերի հաստատման գործընթացներում: Կարծում ենք դրանք նաև էական ազդեցություն են ունեցել հանցափորության դեմ պայքարում ներպետական օրենսդրության զարգացման վրա, քրեական գործերով պետությունների փոխհամագործակցության կազմակերպաման և այլ խնդիրների լուծման համար:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունը իր անկախության 20 տարիների ընթացքում կարողացել է ինտեգրվել միջազգային գրեթե բոլոր կառույցներին և որոշակի աշխատանք է տարել քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտի զարգացման և կայացման ուղղությամբ: Այդ տարիների ընթացքում բացի միջազգային կառույցներին ինտեգրվելուց, գործող միջազգային պայմանագրերին անդամակցելուց, Հայաստանի Հանրապետությունը

¹ Տվյալները վերցված են ԱԳՆ պաշտոնական կայք էջից:

կնքել է պայմանագրեր ինչպես ԱՊՀ երկրների, այնպես էլ այլ պետությունների հետ՝ ձևավորելով իր ինքնուրույն միջազգային-իրավական բազան: ՀՀ-ում կայացած և գործող պետք է համարել ինչպես միջավետական, այնպես էլ միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերի հիման վրա իրականացվող գործընթացները, որոնք նպաստում են ՀՀ-ում իրականացվող դատաիրավական բարեփոխումների իրականացմանը:

Lianna Sargsyan

Chair of European and International Law, YSU

Lecturer

INTERNATIONAL COOPERATION OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE FIELD OF THE MUTUAL ASSISTANCE IN CRIMINAL CASES

In the article the questions concerning the cooperation between the RA and other countries based on the agreements are discussed. The author illustrates is shown the evolution of the legal basis of the cooperation in mutual assistance of the RA. The article analyzes the bilateral and multilateral agreements of the RA and the results of the cooperation the last two years period.